Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9550

9551

638.4
L-93

2011

638.4
L-93

Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ

# ՊԱՏԻԿ Է ԲԱՅՑ ՉԱՏԻԿ Է

Մոլիններին կեանքից հետազօտութիւն

2102

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Գլուխվում է. պր. Ա. Բարխատիր. փող. աՀՎԻՆԱ:
1890

27277-Ա.3

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 12-го августа.
Тип. „Ароръ“ Т. Я. Назарьянъ, уг. Гол. пр. и Бар. ул.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Հայ. Ա. Մասնիկյան
ԱՆՎԱՆ
6204-57



Այս գրքոյկից յետոյ,—որ յատկապէս ժողովրդական հրատարակութիւնների համար յանձնն առաւ գրել երիտասարդ ընագէտ Վ. Լունկեվիչ,—լոյս կը տեսնեն ժողովրդական ընթերցանութեան համար խմբագրված մի շարք գրքոյկներ, որոնց նիւթը վերցրած պիտի լինի գրեթէ բուսական գիտութիւնից ու նպատակը կը լինի՝ ժողովրդացնել, ժողովրդի ընթերցանութեան եւ հասկացողութեան մատչելի դարձնել բնութեան եւ գիտութեան այն երեւոյթները եւ տարերքը, որոնք մինչեւ այժմ էլ անթափանցելի գաղտնիք են մնացել մեր ժողովրդի համար:

Պարզել շրջապատող բնութեան մէջ՝ ամեն քայլափոխում տեղի ունեցող հետաքրքրական երեւոյթները, հասկացնել թէ ինչպէս են առաջ գալիս օդային երեւոյթները, թէ ինչ է անձրեւը, կարկուտը, ձիւնը, կայծակը, թէ ինչպէս է առաջանում ցերեկը եւ գիշերը, ամառը եւ ձմեռը, բացատրել թէ ինչ է օդը, ջուրը, հողը, բացատրել քիմիական եւ ֆիզիքական այն երեւոյթները, որոնք ամեն օր կատարվում են բոլորի

աչքի առաջ, բայց միանգամայն անհասկանալի են ժողովրդի համար, ծանոթացնել բուսական եւ կենդանական աշխարհի հետ, վերջապէս հասկացնել թէ ինչ է ինքը մարդը, եւ ինչպէս է ապրում նա,—ահա ժողովրդացրած գիտական եւ բնագիտական գրքոյկների նպատակը:

Ժողովրդին նախապաշարմունքներից ազատելու ամենազօրեղ միջոցը—գիտութիւնն է: Մարդուն ինքնաճանաչ դարձնելու ամենակարճ ճանապարհը—սովրեցնել նրան գիտակցօրէն եւ բընական աչքով նայել շրջապատող աշխարհի վրա:

Տուէք ժողովրդին գիտութիւն, ծանոթացրէք նրան շրջապատող աշխարհի հետ, եւ դուք հեշտութեամբ կը հասնէք նպատակին: Եւ հէնց այդ նպատակին են ձգտում ժողովրդացրած գիտական-բնագիտական էժանագին գրքերը:

Ռ. ՄԱՂԱԽՅԱՆ

1890, օգոստոս
Թիֆլիս

Դուք անկասկած շատ բան կարդացած կը լինէք մարդկանց կենցաղավարութեան, նիստ ու կացի մասին, իսկ մրջիւնների մասին դժուար թէ մի բան կարդացած լինէք: Ախր ինչ բան է այդ փոքրիկ, անշէնք, անշնորք միջատը, որ մարդ նրանով հետաքրքրվի: Ամբողջ օրը գժի նման դէս ու դէն է վազվզում, հազար անգամ մտնում է բունը դուրս գալիս՝ ինքն էլ չը գիտէ ինչի համար, կամ թէ մի ցորենի հատիկ, սատկած մժեղ առած քաշ է տալիս բունը. ապրում է իր համար անքան անասունի նման, մինչև բնութեան թագաւորի՝ մարդու ոտի տակ ընկնելն ու տրորվելը:

—Ախր ինչպէս կարելի է, կասէք դուք մտքներումդ, համեմատել մրջիւնին մարդուս հետ, նրա կեանքը մարդու կեանքի հետ ու մինչև անգամ գրքեր գրել այդ կեանքի մասին: Մարդս, ինչ ասել կուզի, բանական արարած է. նա հօ մրջիւնի ընկերը չէ: Տես, նա ինչպէս է կարգի դրել իր կեանքը, ինչպէս է ամեն բան նախատեսել: Ցրտի դէմ էլ է հնարք գտել, քաղցի դէմ էլ: Հոյակապ տներ է շինել իր համար, խոպան հողը մշակել է, վայրի կենդանիներից շատերին ընտելացրել, բանաց-

նում է իր համար, գործ է ածում նրանց միսը, կաթը, մորթին և այլն։ Ա.հագին գործարաններ է հիմնել, ինչ որ իրան պէտք է պատրաստում է այնտեղ հազար տեսակ գործիքներով ու զարմանալի մեքենաներով։ Գեղեցիկ խճուղիներ, երկաթուղիներ, հեռագրական գծեր է շինել և էլի հազար ու մի այդպիսի բաներ։ Հիմի եկել էք ու մրջիւնի նման չնչին արարածին մարդուս ընկեր էք անում։

Այդ և ուրիշ շատ այդպիսի բաներ երևի կանցնեն մտքներովդ, ընթերցողներ. բայց ես պէտք է ձեզ ասեմ, որ դուք շատ սխալվում էք։ Մի քանի խելօք ու գիտուն մարդիկ տարիներով օրական մի քանի ժամ մրջիւնի բունի կողքին նստած՝ դիտել են մրջիւնների կեանքը և տեսել են, որ մրջիւնը ընդհակառակը, շատ ուշադրութեան արժանի ու հետաքրքրական կենդանի է։ Այդ գիտնականներն իրանց դիտածները մանրամասն գրել են։ Ես նրանցից մի քանիսի գրածները կարդացել եմ, ինքս էլ դիտել եմ ու տեսել, որ նրանց ասածը ճիշդ է։ Այժմ էլ ուզում եմ ձեզ պատմել ինչ որ յայտնի է մրջիւնների մասին, որ դուք էլ կարդաք ուրիշների դիտողութիւնները, ինքներդ էլ դիտէք, տեսնէք ձեր աչքերով ու ծանօթանաք այդ «պստիկ է բայց չստիկ է» միջատի հետաքրքրական կեանքի հետ։

## I.

Նայէք մրջիւնի բունին.—մի փոքրիկ, կոնաձև՝ շաքարի գլխի պէս հողակոյտ է. մէջն ու չորս



կողմը լիքը մրջիւններ են. դրանցից միայն մի քանիսը թևաւոր են, իսկ մեծ մասը թև չունեն։ Բռնենք այդ անթև մրջիւններից մէկին,—այդ բանւոր մրջիւններն են,—տեսնենք ինչ բան է։ Ըստ երևոյթին, մի առանձին բան չը կայ.—ահա գլուխը, կուրծքը, փորն ու ոտները. էլ ուրիշ ոչինչ։ Բայց վերցրէք խոշորացնող ապակին և կը տեսնէք, որ բացի մարմնի այդ գլխաւոր մասերից, ուրիշ բաներ էլ կայ դիտելու։

Հա՛, դուք գուցէ չը գիտէք թէ ի՞նչ է խոշորացնող ապակին։ Խոշորացնող կամ խոշորացոյց կոչվում է այնպիսի ապակի, որ եթէ մօտեցնէք աչքներիդ ու նրա միջով նայէք մի որ և է առարկայի, կը տեսնէք, որ առարկան իսկականից մեծ է երևում. օրինակ՝ քորոցի գլուխը սիսեռի չափ է երևում, մաղը շաքարի թելի հաստութեամբ և այլն։ Ուրեմն մրջիւնն էլ իսկականից մօտ քսան անգամ աւելի մեծ կերևայ, եթէ այդ ապակիով նայենք նրան, և այն ժամանակ մենք պարզ կը տեսնենք նրա մարմնի այնպիսի փոքրիկ մասերը, որ մարդուս աչքը չէ կարող ջոկել առանց խոշորացոյցի։ Նայենք խոշորացոյցով մրջիւնին։ Ի՞նչ ենք տեսնում։ Գլխին երկու հատ մեծ աչք, բերան՝ վերին ու ներքին շրթունքներով, երկու հատ սուր ծնօտ, որով մրջիւնը կրծում ու ծամում է իր կերակուրը—այդ սուր ծնօտները նրա համար նոյնն են, ինչ որ մեր ծնօտ ու ատամները մեզ համար,—վերջապէս էլի գլխի վրա երկու հատ փոքրիկ մազ, որոնք անդադար

շարժվում են և որոնց կարելի է բեխեր կամ շոշափուկ անուանել։ Կրծքին կպած են երեք զույգ ոտներ, որոնցից ամեն մէկը մի քանի խաղ կամ յոդ ունի։ Մրջիւնին էլ հէնց նրա համար են յոդաւոտ կենդանի անուանում, որ ոտները ջոկ-ջոկ փոքրիկ յոդերից են կազմված։ Թևաւոր մրջիւնների թևերն էլ կրծքին են կպած լինում։ Այժմ նայենք փորին. նա էլ մի քանի ջոկ-ջոկ օղակներից է բաղկացած, որոնք փորի վրա կտրվածքների նման բաներ են կազմում. և դրա համար է, որ մրջիւնին միջատ են անուանում։

Դեռ ոչ ոք տեսած չը կայ մենակ, ջոկ-ջոկ ապրող մրջիւններ։ Մրջիւնն էլ մարդու և մի քանի ուրիշ կենդանիների նման շատ սիրում է իր նմանների ընկերութիւնը. դրա համար էլ մրջիւնները խում-խումբ են ապրում, այնպէս որ ինչ մրջիւնաբուն որ նայէք հազարաւոր մրջիւն կը տեսնէք. այնպիսի մրջիւնանոցներ էլ կան, որ միջի մրջիւնների թիւը կէս միլիոնի է հասնում։ Բայց չը կարծէք թէ մրջիւնանոցի բնակիչները բոլորովին պատահական կերպով են ընկերացել իրար կամ թէ ժամանակաւոր նպատակներով, օրինակ՝ նրա համար, որ միասին կերակուր փնտռեն կամ յարձակումն գործեն դրացի մրջիւնանոցի վրա, որ պէտք է ասած, նրանք շատ են սիրում անել, և այլն։

Ո՛չ, ընդհակառակը, մրջիւնանոցը մեծ, բազմամարդ քաղաքի նման մի բան է, որի բնակիչները կապված են իրար հետ մշտական կապերով, ընկերովի աշխատում են, պաշար են հաւաքում, միասին պաշտպանում են իրանց բունը թշնամու յարձակումից, որ սովորաբար մօտակայ մրջիւնանոցների բնակիչների կողմից է լինում, և այլն։

Բայց ինչ եմ ասում, ինչ քաղաք. մրջիւնանոցը ամբողջ տէրութիւն է իր հպատակներով ու իշխանութեամբ, զինուորականներով ու խաղաղ քաղաքացիներով, սարուկներով ու ստրկատէրերով։ Եթէ ուշադրութեամբ նայէք մրջիւնանոցի բնակիչներին, կը տեսնէք, որ արտաքին տեսքով էլ միմեանցից ջոկվում են։ Ամենից առաջ դուք կը նկատէք թևաւոր արձերի, էգերի և անթիւ բանւորների տարբերութիւնը։ Բանւոր մրջիւններին ճանաչելը դժուար չէ, որովհետև մրջիւնների մեծ մասը բանւոր են։ Բացի դրանից բանւոր մրջիւնը գիտենալով, որ շատ գործ կայ վզին, իսկ ժամանակը ինչպէս ասում են՝ ոսկի է, ձեռքերը ծալած չէ նստում. նա շարունակ դէս ու դէն է ընկնում, շտապում է, բան է կրում իրանց հասարակաց բնակարանը, այդ պատճառով էլ ուրիշ մրջիւններից աւելի է աչքի ընկնում։ Սիր, ինչպէս կարող են դէս ու դէն չընկնել բանւոր մրջիւնները։ Նրանցից մի քանիսը պէտք է շէնք շինեն ու նորոգութիւն անեն՝—այդ որմնադիրներն ու հիւսներն են,—միւսները պէտք է պաշարեղէնի հոգսը քաշեն, գտնեն, կրեն բունն ու ամբարեն նշանակված տեղում. մի խօսքով հազար ու մի այդպիսի գործ պէտք է անեն բանւոր մրջիւնները։ Եթէ նայենք, բանւոր

մրջիւններից մի քանիսին, կը տեսնենք՝ որ նրանց գլուխն ու ծնօտները մի քիչ աւելի մեծ են, քան միւսներինը։ Այդ գլխաւոր զինուորներն են։ Այդ զինուորները օտար մրջիւնների հետ պատերազմելիս իրանց ծնոտներովն են կռւում. դրանով է բացատրվում նրանց ծնօտների մեծութիւնը։ Այնպիսի մրջիւններ էլ կան, որոնց գլուխը մարմնի ամբողջ մնացած մասի չափ է, որ նոյնպէս միքիչ աւելի մեծ է, քան բանող մրջիւնի իրանը։ Դրանք կոյր մրջիւններն են, մրջիւններից ամենաանբաղդները։ Նրանք հէնց միայն նրա համար են, որ իրանց մեծ, կոյր գլխով զանազան թշնամիների ուշադրութիւնն իրանց վրա գրաւելով՝ չը թողնեն որ նրանք բանող մրջիւններին նկատեն։ Երբ որ, օրինակ, բանող մրջիւնները դուրսը, բաց երկնքի տակ են բանում, մեծագլուխ կոյրերը պտտում են նրանց մէջ, բան է եթէ մի թռչունի սիրտն ուզեց մի մժեղ կամ միջատ անուշ անել, ինչ ասել կուզի, որ մանր մրջիւնների ետևից չի ընկնի, կաշխատի խոշորներիցը ձեռք գցել. այն ժամանակ վայն եկել է ու տարել մեր գոնչագլխին... Օտար մրջիւնների հետ կռւելու ժամանակ էլ գոնչագլուխներին առաջին շարքերումն են կանգնեցնում. էլ ինչ կանեն հողէ պատ ու պատնէշը։ Ահա կոյրերի պաշտօնը. էլ ուրիշ բանի պէտք չեն նրանք։

Բանող մրջիւններից շատերը մրջիւնանոցից համարեա իսկի չեն դուրս գալիս. դրանք տան սպասաւորները—դայեակներն են, որոնք մրջիւնաձագերին պահում ու խնամում են։ Դայեակները բացի ձագերին խնամք տանելուց, ուրիշ ոչնչով չեն զբաղվում։

Վերև յիշված բոլոր բանող մրջիւնները չեն կարող ձագեր ունենալ։ Նրանք բացի իրանց գործից և պաշտօնից ոչնչով չեն կարող պարապել։ Իսկ նոր մրջիւններ, մրջիւնաձագեր միայն թևաւոր որձերն ու էգերն են բերում։ Էգ մրջիւններին դժուար է տեսնել, որովհետև ամեն մի մրջիւնանոցում երեք հատից աւելի էգ չի լինում. իսկ որձերի թիւը երբեմն տասնեակների է հասնում։ Էգը որձից միայն նրանով է զանազանվում, որ փորը որձի փորից մեծ է. մնացած բաներում տեսքով բոլորովին նման է նրան։ Այդ թևաւոր մրջիւնները մրջիւնանոցի ազաներն են. ոչնչի հոգս չեն քաշում, բան չեն անում. և միայն երբեմն երբեմն, հազարից մի անգամ մասնակցում են ընդհանուր աշխատանքներին։

Երբեմն բանող մրջիւններին դիտելիս կարելի է տեսնել, որ մի քանիսը իրանց տեսքով բոլորովին զանազանվում են միւսներից. կամ շատ փոքր են լինում միւսներից կամ գոյնն է տարբեր լինում մրջիւնանոցի միւս բոլոր բնակիչների գոյնից։ Այդ ինչ մրջիւններ են։ Ա՜յ, հէնց դրանք են այն ճորտերը, ստրուկները, որոնց մենք վերևը յիշեցինք։ Առաջ դրանք էլ մի որ և է ուրիշ մրջիւնանոցի ազատ քաղաքացիներ են մղել, բայց յետոյ օտար մրջիւնների դէմ վարած պատերազմի ժամանակ

գերի են ընկել թշնամու ձեռքը և ահա այժմ նրանք անազատ ստրուկներ են։ Ադաները աշխատում են մինչև անգամ նրանց դուրս չը թողնել մրջնանոցից լույս աշխարհ, և նրանք դրա համար նեքևում տանու գործերն են կատարում։ Մրջնանոցում այնպիսի մրջունի էլ կարող էք հանդիպել, որին նայելուց համարեա ոչինչ չի երևում, բացի ահագին գնտաձև փորից. իսկ գլուխն ու կուրծքը նոյնչափ են, որչափ միւսներինը։ Այդ մրջունները մեղրաքաղ են կոչվում. իսկ թէ ինչ պաշտօն ունեն նրանք մրջունների թագաւորութեան մէջ, այդ յետոյ կը պատմեմ։

Մրջունները իրարից տարբերվում են թէ իրանց մեծութեամբ, թէ գոյնով և թէ առհասարակ արտաքին տեսքով։ Օրինակի համար՝ կան սև, կարմրագոյն, շէկ, դարչնագոյն և այլն մրջիւններ, այնպէս ինչպէս մարդկանց մէջ լինում են կարմրամորթներ՝ օրինակ՝ հնդիկներ, սևամորթներ՝ օրինակ՝ նեգրներ, արաբներ, սպիտակամորթներ՝ օրինակ՝ հայեր և այլն։ Մի մրջիւնանոցի մէջ սովորաբար մի գոյնի և մօտաւորապէս մի մեծութեան մրջիւններ են լինում։

Երևի այժմ մտքներումդ ասելիս կը լինէք, — եթէ ինչ որ մինչև հիմա կարդացինք ճշմարիտ է, մրջունը՝ ճիշդ որ հետաքրքրական կենդանի է եղել։ Տեսէք ի՞նչ ճարպիկ կերպով կարդի է գցել ամեն բան. կարծես զգացել է, որ եթէ մրջունանոցում զանազան աշխատանքները բոլոր մրջիւն-



ները միտեղ չանեն, այլ բաժանեն իրանց մէջ, այն ժամանակ գործը աւելի լաւ, յաջող կերթայ, և ահա նրանք էլ մարդկանց պէս իրանց զինուորներն, որմնադիրներն, հիւսներն, դայեակներն, ճորտերն և այլն ունեն։ Իսկ թէ որքան օգտակար է նրանց համար այդ,—էլ ասել չի լինի. ամեն մի մրջիւն հիանալի գիտէ իր գործը, որովհետև մի, շատ շատ երկու տեսակ գործ պէտք է անի, և այդպիսով աւելի լաւ ու արագ էլ է կատարում իր գործը, քան եթէ մրջունանոցի ամեն գործերին մասնակցէր։— Նրանք էլ մարդկանց պէս աշխատանքները բաժանել են. ամեն մէկին մի տեսակ գործի են դրել և նրանց ընդհանուր, հասարակաց գործը յաջող է գնում. բայց թէ որդեօք լաւ է այդ ամեն մի մրջունի համար, եթէ նրա վրա նայէք իբրև մի առանձին անհատի վրա,—այդ էլ ինքներդ վճռեցէք։

## II

Ափսոս, ընթերցող, որ չենք կարող մտնել մրջնաբունի ներսը ու տեսնել նրա շէնքը։ Ասենք շատ էլ ցաւելու բան չը կայ. մենք կարող ենք քանդել մրջունաբունը և նայել, թէ ներքսևից ինչպէս է շինված։ Դրսևից մրջունների բունը շատ անշէնք, անշնորք բան է.—սրածայր մի հողակոյտ, վրան լիքը փոքրիկ ճիւղերի, ծղնօտների, տերևների կտորտանք ու աւազ,—էլ աւելի ոչինչ։ Այդ հողակոյտները զանազան մեծութեամբ են լինում. եր-

բեմն շատ մեծերն են պատահում՝ մի քանի ոտնաչափ բարձրութեամբ, կարծես խոտադէզեր լինեն։ Բայց նայեցէք այդ արտաքուստ անշնորք շինութեան ներսը։ Տէր Աստուած, ինչքան պուճուրիկ սենեակներ կան։ Սկզբում այնպէս կը թուի, որ, ինչպէս առաջ էլ կարծում էիք՝ այդտեղ իսկի կարգ չը կայ։ Բայց տեսէք, որ այդ սենեակները կանոնաւոր յարկերով են դասաւորված։ Եթէ յարկերը հաշուելու լինէք, կը զարմանաք,—երբեմն յարկերի թիւը քառասունի է հասնում։ Քառասուն յարկ, քսանը՝ գետնի երեսին, քսանը՝ գետնի տակին,—այդպիսի շինութիւն շինել դեռ մարդկանցից ոչ մէկի ձեռքովը չի եկել։ Ամեն յարկում լիքը մեծ ու փոքր սենեակներ են, միացած իրար հետ նեղ անցքերով, որոնք միջանցքների ձև ունեն։ Բոլոր յարկերն էլ իրար հետ միջանցքներով են միանում։ Բացի այդ փոքրիկ սենեակներից, որոնք լիքն են մրջիւնա ձագերով, կան ուրիշ մեծերն էլ,—նրանք հիւրասենեակների ու դահլիճների նման մի բան են։ Մեծ սենեակները շատ անզամ շատ գեղեցիկ են շինված լինում՝—կամարակապ առաստաղ, կանոնաւոր պատեր, հարթ հաւասար յատակ. երբեմն մեծ սենեակների կամարաձև առաստաղների տակ՝ աւելի պնդութեան ու հաստատութեան համար սիրուն ու նուրբ սիւներ են նեցուկ դնում։ Ինչպէս տեսնում էք, մրջիւնը միայն օգտակարութեանը չէ նայում. նրա համար պակաս նշանակութիւն չունի և շնորքն ու գեղեցկութիւնը, նա շատ մարդկանցից աւելի լաւ է հասկանում, որ ամենից խելօքը՝ օգտակարը դուրեկանի հետ միացնելն է։ Մի ծիծաղէք, սիրելի ընթերցողներ։ Մրջիւնները ձեր կարծածի նման լիմար չեն։ Ի՞նչ էք կարծում, ինչի՞ համար են նրանց բնակարանի վերի և ներքի յարկերը։ Տեսա՞ք, որ չէք իմանում։ Ներքի յարկերում ձագուկներին գիշերներն ու վատ եղանակներին են պահում, իսկ ցերեկն ու լաւ եղանակներին կրում են վերի յարկերի սենեակները։ Բոլոր փոքրիկ սենեակները կապված են միջանցքներով դլխաւոր, մեծ սենեակների հետ. սրանցից ելքեր կան դէպի դուրս։ Մրջիւնաբունի դրսի անցքը մտնելու ու ելնելու դուռն է. հեռատես մրջիւնը գիշերներն ու վատ եղանակներին այդ դուռը փակում է, որ խոնաւութիւն ու ցուրտ չը թափանցի սենեակների ներսը, և բացի դրանից արգելք լինի աւազակ—թշնամիների դէմ, որոնք գիշերը հեշտութեամբ կարող են մտնել մրջիւնանոցը ու շատ վնաս հասցնել նրա բնակիչներին։ Աւենք, մրջիւնները հարկաւոր դէպքում միայն դուռը փակելով չեն բաւականանում. նրանց հեռատեսութիւնը այնքան տեղն է հասնում, որ գիշերները դռանը պահապաններ են դընում, որոնք ամբողջ գիշերը հսկում են, չեն քնում և վտանգի ժամանակ իսկոյն իջնում են ներքև ու իմաց տալիս ընկերներին։

Արժէ տեսնել, թէ ինչպէս են մրջիւնները կառուցանում իրանց բազմայարկ հասարակական պալատները։ Մէկ էլ տեսար բանուոր մրջիւնները իրար

անցան. որմնադիրները, հիւսներն ու ճարտարապետները դէս-դէն վազ տուին ու սկսեցին բանել իրանց բեխերով, ոտներով ու ամենից աւելի՝ ծնօտներով։ Կաւի, հողի մանր կոշտեր ու աւազ է՝ որ զարմանալի արագութեամբ կրում են շինութեան համար նշանակված տեղը։ Մի տեղ որմնադիր մրջիւնները պատ են դնում ու թաղ տալիս, կամար կապում. ուրիշ տեղ հասարակ բանւորները շինութեան նիւթեր են կրում ու դարսում. մի քանիսը առաստաղն են շինում, միւսները կոլոր սիւները. ուրիշները սենեակից սենեակ ու մրջիւնանոցից դուրս ծածկված անցքեր ու միջանցքներ են անցկացնում. ամենքն էլ տաքացել են, ամենքն էլ սովորականից աւելի սիրով են իրար հետ ու ժրաջան, ամենքն էլ ուրախ սրտով բանում են և ուրախութեամբ նայում արագ շինվող մրջիւնաքաղաքին։ Մէջները դէս ու դէն են վազվզում բազմաթիւ մատակարար-մրջիւններ, որոնք մեծ խնամքով կերակրում են սոված բանւորներին և սիրտ են տալիս նրանց ու նորից գնում ուտելիք ճարելու։ Վերջապէս բուռը պատքաստ է. փոքրիկ ճիւղերի, յարդի, տերևների կտորտանք ու աւազ են ածում վրան, շինում են դուրս տանող անցքերը և յոգնած մշակները բնակութիւն են հաստատում իրանց նոր քաղաքում ու սկսում իրանց ամենօրեայ, խաղաղ պարապմունքները։ Բայց չը կարծէք թէ բոլոր մրջիւններն էլ բուները հողից են շինում.—կան այնպիսիներն էլ, որոնք իրանց շէնքերի համար գլխաւորապէս տախ-



տակի սղոցվածք, թեփ են գործ ածում,—ահա, այդ մրջիւններին են հիւսն անուանում։ Ասենք այնպիսի մրջիւններ էլ կան, որոնց կարելի է հիւսն անուանել այդ խօսքի բառացի մտքով, որովհետև նրանք իրանց բազմայարկ շէնքերը կրծելով են փորում հին կաղնի կամ ուռի ծառերի ներում։

## III

Անթիւ կամ բանւոր մրջիւնները ոչ միայն բնակարան շինելով են զբաղված, այլ և ամբողջ մրջիւնանոցի ուտելիքի հոգսն են քաշում։ Որձերը, էգերը ու ձագերն ոչ միայն առ հասարակ ոչինչ չեն անում, այլ մինչև անգամ իրանց համար կերակուր էլ չեն փնտռում։ Որձերն ու էգերը մրջիւնային պետութեան ազաներն են. նրանց գործը ձագեր բերելն է, այսինքն մրջիւնանոցի ազգաբնակութեան բազմացնելը. այդ է նրանց բան ու գործը. ուրիշ բաներում նրանք սարսափելի ծոյլ ու հեշտասէր են. նրանք միայն ուտել, խմել, քնել, քէֆ անել ու անխոնջ բանւոր մրջիւնների աշխատանքն անխիղճ կերպով վայելել գիտեն, և այդ անպատիժ է մնում. այդ նրանց իրաւունքն է։ Պէտք է ենթադրել մինչև անգամ, որ բանւոր մրջիւններն երևի իրանց սաստիկ վիրաւորված կը զգային, եթէ որձերն ու էգերը հրաժարվէին նրանց մատուցած ծառայութիւններից, և իրանց համար չափազանց մեծ բախտաւորութիւն են հա-

ՀԱՍՊ-ԻՄ.ՍՍՀ
Գ. Մ. Ա. Մասնիկյան
Գ. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մարում այդ ձրիակերներին ամեն տեսակ ծառայութիւններ մատուցանելը, նրանց ծուլութիւնն ու աղայութիւնը խրախուսելը։ Զարմանալի՜ արարած է բանուոր մրջիւնը։ Ի՞նչն է նրան այդքան սերտ կերպով կապում իր աղաների հետ, ի՞նչն է դրդում նրան հլու հնազանդութեամբ կատարել նրանց բոլոր քմահաճութիւնները և այդքան անձնուիրութեամբ աշխատել նրանց համար։ Ի՞նչը, չը գիտեմ։ Ոչ թէ ես, ինքը մրջիւնն էլ դժուար թէ իմանայ այդ. խեղճը աչքը բաց է արել այդ կարգերն է տեսել. նրա հայրերի, պապերի, պապի պապերի ժամանակ այդպէս է եղել, այդպէս էլ կերթայ. նրա կարծիքով ուրիշ տեսակ չի էլ կարող լինել։

Այսպէս ուրեմն բանուոր մրջիւնը բացի իրանից կերակրում է որձերին, էգերին ու ձագուկներին։ Սակայն ձագուկները մեղք չունեն. այդ պուճուր ու թոյլ արարածները առանց ուրիշի օգնութեան կերակրվել չեն կարող։ Բայց ի՞նչ է ուտում մրջիւնը։ Ի՞նչ ուտելիք պէտք է ճարի բանուոր մրջիւնը։ Ամեն բան.—ինչ ասես ուտում է. նրա գլխաւոր ուտելիքը հացահատիկները, պտուղները, միջատներն են. մի քանի՝ մինչև անգամ աւելի խոշոր, թէ ողջ թէ սատկած կենդանիներ էլ է ուտում. բայց մրջիւնը աւելի սիրում է զանազան տեսակ քաղցր բաներ՝ մեղր, բոյսերի քաղցր հիւթ, շարբաթ, քաղցրաւենիք, քաղցր խմորեղէններ և այլն։ Եւ որքան դժուարութիւնների ու վտանգների են ենթարկվում նրանք երբեմն՝ իրանց այդ քաղցրամոլութեան



պատճառով. մրջիւնն ինքն էլ լաւ գիտէ, որ քաղցրամոլութիւնը եթէ շատ էլ մի մեծ ախտ չէ, բայց շատ վտանգաւոր բան է։ Սակայն մրջիւնը պատահմամբ մտաւ մեղրի բղուղը կամ քաղցրաւենիքի ամանը, կուշտ կերաւ, բերանը քաղցրացրեց ու ուզում է դուրս գալ. բայց տես որ ոտով գլխով այնպէս է խրուել քաղցր հիւթի մէջ, որ դուրս գալու ճար չը կայ...

Այժմ տեսնենք թէ ինչպէս են բանուոր մրջիւնները ճարում կերակուրը։ Ճիշդ է, կան այնպիսի մրջիւնանոցներ, որոնց մրջիւնները առանձին-առանձին են ուտելիք փնտռում, բայց առհասարակ մրջիւնները խումբ—խումբ են գնում կերակուր փնտռելու և նրանց այդ զբաղմունքը նոյնքան հետաքրքրական է, որքան և նրանց բան շինելը։ Նայեցէք, ա՛յ այս բանուոր մրջիւնին, որ սովորականից դուրս շտապելով ու զբաղված մարդու քայլուածքով մտնում է բունը ու մի րոպէից յետոյ դուրս է գալիս այնտեղից՝ մի քանի ուրիշ, իրան նման բանուոր մրջիւնների հետ։

Նա գնաց յայտնեց իր ընկերներին, թէ մօտերքում մի տեղ որս կայ, թէ իր ոյժը չի պատում, որ այդ որսը քաշ տայ բունը, այնպէս որ օգնականներ են հարկաւոր իրան։

—Ինչպէս թէ յայտնեց,—կը հարցնէք դուք երևի զարմացած։—Հապա ինչ էիք կարծում. մրջիւնները իրար հետ խօսում են այնպէս, ինչպէս ես ու դուք ենք խօսում միմեանց հետ։ Բայց նրանց

խոսակցութիւնը մեր խոսակցութեան իսկի նմանութիւն չունի։ Նրանք խոսելիս ձայն չեն հանում, մեզ պէս ձայների միջոցով չեն հաղորդում միմեանց իրանց մտքերն ու մտադրութիւնները, այլ շոշափուկների, ըեխերի միջոցով։ Եթէ ասածիս չէք հաւատում, ես ձեզ կը պատմեմ մրջիւնների կեանքից մի քանի հետաքրքրական դէպքեր, որոնցով մարդիկ իմացան, թէ մրջիւններն իսկապէս խոսակցում են և երբեմն շատ լաւ հասկանում իրար ասածը։ Մի գիտնական մրջիւնների կեանքը ուսումնասիրելու ժամանակ մի անգամ մի բղուղ մեղր է կախ տալիս թոկով առաստաղից. բռնում է մի մրջիւն ու դնում բղուղի մէջ։ Բաղցրամոլ մրջիւնը կուշտ ուտում է, թոկովը բարձրանում առաստաղ, պատովը իջնում ու վազում իր բունը։ Մի քանի րոպէից յետոյ նա վերադառնում է մի քանի ուրիշ մրջիւնների հետ, որոնք սկսում են մաքրազարդել մեղրը։

Մի ուրիշ գիտնական բռնում է մի քանի հատ մրջիւնաձագ և մի մրջիւնի հետ դնում մի ամանի մէջ։ Մի քիչ ժամանակ մեր մրջիւնը շուարած պտոյտպտոյտ է գալիս, յետոյ թողնում վազ է տալիս մրջիւնանոցը։ Մէկ էլ տեսնում է գիտնականը, որ մրջիւնը յետ է գալիս վազելով, յետևիցն էլ վազ են տալիս տասն-քսան ուրիշ մրջիւններ։ Բոլորը բարձրանում մտնում են ամանի մէջ, բերաններն են առնում մի մի հատ մրջիւնաձագ՝ ու շտապով դիմում դէպի իրանց բունը։



—Ա՛յ, մի դէպք էլ պատմեմ, որ ձեզ կարելի է ծիծաղեցնի էլ։ Մի գիտնական քորոցով մի մեծ ճանճ է մեխում սեղանին ու մի մրջիւն բռնում է դնում ճանճի կողքին։ Մի քանի րոպէ մեր մրջիւնը չարչարվում է ճանճի վրա, տեսնում է որ ոյժը չէ պատում, մենակ ոչինչ չէ կարող անել, վազում է բունը, իմաց տալիս ընկերներին իր գիւտի մասին։ Բայց նրան չեն հաւատում և վերջ ի վերջոյ մի քանիսը կիսասիրտ հետևում են նրան. վազելով յետ է գալիս մրջիւնը ճանճի մօտ, իսկ նրա յետևից բաւական յետ ընկած՝ դանդաղ քաշ են գալիս մի քանի ուրիշ մրջիւններ։ Հասնում է որսին, յետ է նայում տեսնում, որ ընկերները գլուխները դարձրել են ու յետ են գնում բունը. նորից վազում է մեր մրջիւնը, ընկերներին հասնում, չարչարվում է, համոզում է նրանց. նորից սկսում է առաջուայ պատմութիւնը—մի քանիսը նրա յետևից գալիս են դէպի ճանճը՝ բայց տեղ չը հասած յետ են դառնում։ Ճար չը կայ, չեն հաւատում մարդիկը. ինչ արած։ Բարկանում է մեր մրջիւնը ու սկսում կատաղածի նման ձգձգել ճանճին։ Յաղթութիւն,—նրա ծնօտների արանքին մնում է ճանճի թաթը։ Վազում է մրջիւնը ընկերների մօտ ճանճի թաթը բերանին. շունչը կտրվում է, քիչ է մնում վայր ընկնի, բայց էլի գոհ է, ուրախ է։—„Առէք, ա՛յ, աչքներդ կոխէք, չէիք հաւատում, թէ որս կայ, տեսէք ու հաւատացէք. դէ, գնանք.“—ու քաշ է տալիս հետը հաւատի բերած ընկերներին։ Բոլորը

միասին թափվում են խեղճ ճանճի գլխին, պոկում քորոցից ու ուրախ ուրախ քաշ տալիս բունը։ Դէ, հիմա ինչ կասէք, հաւատում էք այժմ, որ մրջիւնները խօսում են իրար հետ ու շօշափուկների միջոցով հաղորդում միմեանց իրանց մտքերը։

Կան մրջիւններ, որոնք օրէօր ապրում, օր աշխատում, օր ուտում են, առանց հոգալու պաշար պատրաստել երկար ժամանակվայ, գոնէ ձմեռվայ համար,—նրանց համար վաղվայ օրը չը կայ, նրանք միայն այսօրվայ վրա են մտածում։ Բայց բոլոր մրջիւններն էլ այդպէս անհոգ չեն։ Նրանցից շատերը ձմեռվայ պաշար են պատրաստում։ Նրանց պաշարը գլխաւորապէս զանազան տեսակ հատիկներից է բաղկացած։ Այդ հատիկները մրջիւնները շատ անգամ ուղղակի հանդիցն են կրում բունը ու դարսում առանձին խուցերում, որ մեր շտեմարաններին կարելի է նմանեցնել։ Եթէ մրջիւնի բունը ընդարձակ է ու ինքն էլ լաւ տնտես է, հատիկների պաշարը ահագին կոյտ է լինում, այնպէս որ ցորենի, բրնձի կամ մի ուրիշ այդպիսի գին ունեցող հատիկի ամբար գտնելը մի և նոյն է թէ մի գանձ գտնել։ Բայց, ա՛յ, աւելի նշանաւոր մի բան.—գիտնականները մինչև անգամ ենթադրում են, որ շատ մրջիւններ իստակում են իրանց բունների մօտի հողը, հատիկներ են կրում ու հերկում, ցանքս են անում։ Այդ երկրագործ մրջիւններն են, որոնք, ինչպէս տեսնում էք, իրանց սեփական հանդերն ունեն։ Ցանածները ծլում են, հասկ են կապում, հասկերը հասնում են, հատիկները վայր են թափում և հողագործ մրջիւնը՝ չափազանց զգոյշ սրտով իր՝ մէկին չորս, մէկին հինգ բերքից զգուշութեամբ հաւաքում է հատիկները ու կրում շտեմարանները։



## IV

—Լա՛ւ. եթէ երկրագործ մրջիւններ կան, ինչի՞ չը պէտք է անասնապահ մրջիւններ էլ լինեն, կը հարցնի երևի ծիծաղելով ընթերցողը։—Այդպիսի մրջիւններ էլ կան, կը պատասխանեմ ես ընթերցողին բոլորովին լուրջ կերպով։ Դէ, բարեհաճեցէք լսել թէ ինչ եղջիւրաւոր անասուններ են պահում մրջիւնները։ Մի տեսակ պստիկ, անշէնք անշնորք, կանանչագոյն միջատ կայ, որ «ափիս» կամ խոտի ոջիլ է անուանվում։ Խոտի ոջիլ նրա համար են անուանում ափիսին, որ ինչ բոյսի վրա ասես կայ այդ միջատից։ Հէնց այդ խոտի ոջիլն է մրջիւնների կթան անասունը, որին այդ պատճառով շատ անգամ մրջիւնի կով են անուանում։ Այդ միջատի յետևի մասի վրա խոշորացոյցով նայելիս դուք կը տեսնէք երկու խողովակ, որոնցից ժամանակ առ ժամանակ դուրս է թորում մի տեսակ կպչուն ու քաղցը հեղուկ, որ մրջիւնները շատ սիրում են։ Բաւական է մարդ իր աչքովը տեսնի, թէ ինչ աստիճան հոգացողութեամբ է մրջիւնը խնամք տանում իր կովերին, որ էլ ամենևին չը կասկածի, թէ մրջիւնը իսկապէս չափից դուրս աչքաբաց ու մինչև

անգամ խելօք արարած է։ Ամեն տեսակ մժեղ տեսնելիս հօ մրջիւնի բերանի թուքը գնում է, բայց նա ոչ միայն ինքը չէ ուտում ափիս, այլ և մեծ եռանդով պաշտպանում է նրան ուրիշ՝ ափիս ուտող միջատներից։ Տեսէք, մրջիւնների ինչ մեծ բազմութիւն է հաւաքվել այդ փոքրիկ բոյսի վրա։ Ինչն է նրանց դրաւում բերում այդտեղ. ինչու են նրանք առհասարակ սիրում բարձրանալ շատ բոյսերի վրա։

Ահա ինչու.—այդ բոյսերի վրա շատ ափիս կայ, վրա են թափվում մրջիւնները, սկսում են լիզել նրանց, շոյել ու խտուտ ածել. վերջապէս ափիսը թուլանում, մեղկանում է ու դուրս է թողնում իր խողովակից մի կաթիլ պարզ ու քաղցր հեղուկ. մրջիւնը լպստում է այդ կաթիլը ու անուշ կուլ տալիս, կրկնելով նոյնը մի քանի անգամ մինչև լաւ կշտանալը։ Մրջիւնն էլի է բերանն առնում այդ հիւթից ու վազում բունը, ուր նրան անհամբեր սպասում են որձերն, էգերն ու ձագուկները, որոնք նոյնպէս չափազանց սիրում են ափիսի կաթը։ Բայց դրանում դեռ մի առանձին բան չը կայ։ Աւելի զարմանալին այն է, որ մրջիւնը արածացնում է իր կովերին։ Նա մեծ խնամքով տեղափոխում է նրանց այն ցողուններից, որոնց հիւթը արածելուց հատել է, նոր ցողունների վրա, որտեղ նրանք կարող են թարմ ու համեղ կերակուր գտնել։ Նա տանում է նրանց իր բունը լաւ հասկանալով, որ աւելի օգուտ է այդպիսի ընտանի կենդանին տանը՝ ձեռքի տակ ունենալ, քան ստիպված



լինել միշտ նրանց կթելու համար քաշ գալ հեռու տեղեր։ Իր տանը մրջիւնը ափիսին նոյնպիսի հոգացողութեամբ է խնամք տանում, ինչպէս բաց օդում, միշտ նրան թարմ ու համեղ կերակուր մատակարարելով։ Բայց դեռ էլի ասելու բան կայ։ Մրջիւնը տանում է իր բունը ափիսների ձուերը և յետոյ, երբ որ ձուերից ափիսաձագեր են դուրս գալիս, նա նրանց դուրս է բերում մրջիւնանոցից լոյս աշխարհ. այնտեղ մրջիւնանոցի կողքին՝ այն խոտերի մօտ, որոնց վրա ափիսներին էր տեղափոխել, նա հողից փոքրիկ շրջապատ է շինում՝ մսուրքի կամ փարախի նման, ուր ափիսաձագերին անպակաս է հոգատար խնամք, համեղ կերակուր և պաշտպանութիւն թշնամիների դէմ։ Բայց այն էլ պէտք է ասել, որ ափիսներն էլ երախտագէտ են, շատ սիրում են մրջիւններին և ճանաչում են նրանց այնպէս, ինչպէս մեր կովերը ճանաչում և սիրում են իրանց տէրերին։ Որպէս զի դուք այն, ինչ որ ես նոր պատմեցի ափիսների ու մրջիւնների յարաբերութիւնների մասին, հէքիաթ չը համարէք, կը պատմեմ ձեզ մի շատ նշանաւոր գիտնականի՝ Դարվինի դիտածը։ Ես հէնց նրա խօսքերով կը պատմեմ, որովհետև այդ գիտնականը այնպիսի հասարակ լեզուով է գրում, որ դուք շատ հեշտ կը հասկանաք։ Ահա թէ ինչ է ասում նա. «Ես հեռացրեցի աւելուկի վրա նստած ափիսների խմբից բոլոր մրջիւններին և մի քանի ժամ շարունակ չէի թողնում, որ մրջիւնները մօտենան ափիսներին։ Ես հա-

մոզված էի, որ այդքան ժամանակ անցնելուց յետոյ, ափիսները կուզենան իրանց հիւթը արտաթորել։ Ես երկար նայում էի նրանց խոշորացոյց ապակիով, բայց ոչ մէկը հիւթ չէր արտաթորում։ Յետոյ ես սկսեցի մազի ծայրով շօշափել ու խուտուտ ածել նրանց, որքան կարող էի, նոյն ձևով, ինչ ձևով որ մրջիւններն են նրանց խուտուտ ածում իրանց շօշափուկներով և բեխերով. բայց նրանցից ոչ մէկն էլ հիւթ չը թողեց։ Դրանից յետոյ ես մի մրջիւն թողեցի նրանց մօտ. պէտք էր տեսնել թէ ինչպէս կրակ կտրած վազվզում էր նա նրանց շուրջը. ակնյայտնի էր, որ նա իսկոյն նկատեց, թէ ինչ թանգագին նախիր է գտել։ Նա իսկոյն սկսեց բեխերով մէկ-մէկ խուտուտ ածել ափիսների փորը և ամեն մի ափիս, հէնց որ զգում էր նրա բեխերի շօշափումը, իսկոյն բարձրացնում էր փորը և արտաթորում քաղցր հիւթի պարզ կաթիլը, որ մրջիւնը ագահութեամբ կուլ էր տալիս։ Մինչև անգամ ամենամատաղաշ ափիսներն էլ այդպէս էին անում...» Այսպէս է պատմում Դարվինը. իսկ Դարվինի խօսքին չը հաւատալ չի կարելի։

Յիշում էք, ընթերցող, ես մի տեղ ձեզ ասացի, թէ մի քանի մրջիւնանոցներում առանձին տեսակ մրջիւններ կան, որոնց ես մ ե ղ ր ա ք ա ղ անուանեցի և որոնք ուրիշ մրջիւններից զանազանվում են իրանց ահագին գնտաձև փորով։ Նրանք էլ մի տեսակ կթան կովեր են։ Այդ մրջիւններն ուտելիք փնտռելիս փորները լցնում են քաղցր հիւ-



թով, որով նրանք բունը վերադառնալուց յետոյ կերակրում են իրանց ընկերներին։

Մրջիւնների բուներում բացի ափիսներից, շատ տեղ ուրիշ մի քանի միջատներ էլ են լինում, օրինակ, բզոյներ, որոնց նոյնպէս ընտանի անասուն կարելի է համարել. այդ միջատներից մի քանիսը մինչև անգամ զրկվել են տեսնելու ընդունակութիւնից, որովհետև իրանց ամբողջ կեանքը անց են կացնում մութ մրջիւնանոցում՝ առանց ոտը դուրս դնելու նրա շէմքից. իսկ խաւարում ապրողի համար, ինչ խօսք, որ աչքը աւելորդ բան է. դրա համար էլ այդ մրջիւնները աչքից զրկվել են։

Դուք ինքներդ, ընթերցողներ, գուցէ տեսած լինէք մրջիւնանոցների մօտ նեղ, բաւական մաքուր շաւիղներ. բանւոր մրջիւններն են շինել այդ շաւիղները, որ իրանք աւելի հեշտութեամբ ու յարմարութեամբ կարողանան մրջիւնանոցից կերակուր ու պաշար փնտռելու գնալ։ Ասում են մինչև անգամ, որ մրջիւնները իրանց հաղորդակցութեան ճանապարհները շինելիս ոչ միայն կրծոտում են շաւիղների վրա դտնված բոյսերը, քաղհանք անում, մաքրում, այլ և մանր աւազ են ածում նրանց վրա։ Դուք ի հարկէ հասկանում էք բանի էութիւնը։ Աչքաբաց մրջիւնը այնտեղ է հասել, որ սկսել է իր համար խճուղիներ ու խճած փողոցներ շինել։ Բայց այդ էլ մրջիւնին բաւական չէ. նա շատ անգամ մրջիւնանոցից դէպի զանազան կողմեր և երբեմն շատ հեռու տարածութեամբ ծածկած

անցքեր, միջանցքներ է անցկացնում։ Մեծ մասամբ այդ ստորերկրեայ անցքերը անց են կացրած լինում դէպի մրջիւնանոցի մօտակայ բոյսերը, որոնց վրա նստած են լինում մրջիւնի կովերի—ափիսների ամբողջ գաղթականութիւններ։ Ծածկած անցքերը մրջիւններին երկու տեսակ օգուտ են տալիս՝ մէկ որ այդ անցքերը շատ յարմար ու մինչև անգամ գեղեցիկ հաղորդակցութեան միջոցներ են կերակուր ու պաշար փնտռելու և ափիսներ կթելու զնացող մրջիւնների համար, երկրորդ՝ որ այդ ստորերկրեայ անցքերը հիանալի պատսպարան են թշնամիների արշաւանքների ժամանակ։

Բայց ինչ եմ ես ձեզ հէնց միայն այն պատմում, թէ ինչպէս է մրջիւնը բանում, աշխատում, յարչարվում, ճանապարհ ու բնակարան շինում, կերակուր ճարում և այլն։ Տնաշէնը հօ մէկ մէկ էլ հանգստանում է. չէ որ նրա սիրտն էլ կուզի մի քիչ քէֆ քաշել, ուրախանալ, ով գիտէ և զբաղութիւններ անել։ Սիբիրական հօ չի, որ Աստծու օրը աշխատի, աշխատի ու աշխատի։ Ի հարկէ ոչ. և դուցէ սխալված չեմ լինի, եթէ ասեմ որ մրջիւնները հանգստանալու ժամանակ աւելի են մարդուծիծաղ շարժում, քան աշխատելու ժամանակ։

Մրջիւնն էլ իր խաղերը, զուարճութիւնները և մինչև անգամ, ինչպէս մի քանի գիտնականներ պնդում են, իր մարմնամարզական վարժութիւններն ունի։ Մրջիւնների կեանքը ուսումնասիրողներից մէկը, օրինակ, պատմում է որ ինքը տեսել է,



թէ ինչպէս „մրջիւնները կանգնում էին յետևի ոտիկների վրա, շօշափուկներովը միմեանց փաղաքշում էին, սուտ կռիւ էին սրծնում իրար հետ ու թագ կենալու նման մի բան էին խաղում»։ Ուրիշները շատ անգամ տեսել են, որ մրջիւնները առանց, ըստ երևոյթին, զայրացած լինելու՝ բռնում են միմեանց ոտիկներով ու ծնօտներով, գլորվում թաւալվում են գետնին, բռնում են իրանց ընկերներին ու քաշ տալիս նրանց այնպէս, ինչպէս երեխաները միմեանց շալակ են նստում և այլն։ Բանը նրանումն է, որ այդ բոլորը նրանք անում են առանց մի որ և է չար դիտաւորութեան, բոլորովին մտերմաբար, սիրով, և չը նայելով որ շատերը շատ են տաքանում այդ ժամանակ, բայց ոչ մէկը չի վնասվում, այնպէս որ ակամայ մարդ համաձայնում է, թէ այդ բոլորը իսկապէս միայն խաղ ու զուարճութիւն, թէկուզ հէնց մարմնամարզութիւն է։

Եթէ դուք երբ և իցէ լսել էք, թէ ինչպէս է մարդկութիւնը հետզհետէ զարգացել տնտեսական կողմից, դուք անշուշտ կիմանաք, որ մարդիկ ամենից առաջ բացառապէս որսորդութեամբ են պարապելիս եղել ու որսորդութեամբ են իրանց սնունդը ճարելիս եղել. յետոյ մարդս ընտելացրել է մի քանի կենդանիներ ու սկսել է պարապել անասնապահութեամբ։ Բանի որ մարդս որսորդութեամբ ու անասնապահութեամբ է պարապելիս եղել, նա թափառական կեանք է վարելիս եղել, այսինքն նա միշտ՝ իր բոլոր տուն ու տեղով, ունեցած չունեցա-

ծով տեղափոխվելիս է եղել մի տեղից միւս տեղ, ապրելով մի որոշ ժամանակ այնտեղ, որտեղ գազանների ու թռչունների որսը յաջող էր գնում և լաւ արօտ կար ընտանի անասունների համար։ Բայց այդպիսով մարդու դրութիւնը շատ անապահով էր. նրա կեանքը կախված էր որսի առատութիւնից. ձմեռվայ պաշար պահելը դժուար էր. բացի դրանից մարդիկ բազմանալով սկսեցին արօտատեղիների պակասութիւն զգալ։ Վերջապէս մարդիկ սովորեցին մի քանի բոյսեր ցանել ու հունձ ստանալ, ըսկսեցին հողը հերկել, երկրագործութեամբ պարապել, շարժական վրանների փոխարէն հաստատուն բնակարաններ շինեցին ու սկսեցին նստական կեանք վարել։

Նոյն բանը չը տեսաք արդեօք մրջիւնների կեանքում։ Ի հարկէ, լիշում էք, որ կան բացառապէս որս ճարելով, որսորդութեամբ ապրող մրջիւններ, կան անասնապահ-մրջիւններ, կան վերջապէս երկրագործ մրջիւններ։ Ծիծաղելի է, ճիշդ է. բայց մրջիւնները շատ բանում՝ զարմանալի նման են մարդկանց։

Խելօք կենդանի է մրջիւնը, խելօք։

## V

Ամառ է. յուլիսի կամ օգոստոսի հրաշալի օրերից մէկն է։ Էգ մրջիւնները, կամ ինչպէս նրանց ուրիշ տեսակ անուանում են, մրջիւնանոցի թագուհիները մրջիւնանոցներից թռչում են դուրս՝



բաց օդը. նրանց յետևից սլանում են ահագին խմբով թեւաւոր որձերը։ Այստեղ, բաց օդում նրանք անձնատուր են լինում սիրոյ հաճոյքներին։ Եթէ մի քիչ յետոյ նայէք նրանց, աչքներիդ չէք հաւատայ,—թէ էգերը և թէ որձերը ուժաթափ ընկնում են գետին.—հերիք ինչքան զուարճացան, նրանց համար էլ վերջապէս եկաւ պարտականութիւն կատարելու ժամանակը։ Որձերը շատ չանցած սատկում են, իսկ էգերին բանւոր մրջիւնները չափազանց հոգատարութեամբ շրջապատում են ու զգուշութեամբ տանում բունը։ Այդ ժամանակ նրանց թեւերը թափվում են, կամ եթէ չեն թափվում, իրանք են պոկում,—այդ աշխարհային հաճոյքներից հրաժարվելու ու իրանց սրբազան պարտականութիւնը կատարելուն նուիրվելու նշան է։ Ասենք երբեմն էլ բանւոր մրջիւններն են կրծելով պոկում որձերի ու էգերի թեւերը, որ նրանք չը կարողանան մրջիւնանոցից դուրս թռչել, և որ այդպիսով իրանց բանը թեթեւանայ։ Մրջիւնանոցը տարվելուց յետոյ էգը ակամայ սկսում է ձու դնել։ Շրջապատված հաւատարիմ աղախինների, բանւոր մրջիւնների խմբով, նա սողում է մրջիւնանոցում ու ձու դնում։ Երեւի կը զարմանաք, եթէ ասեմ, որ մի էգ մի քանի հազար ձու է դնում, իսկ բանւոր մրջիւնները, չնայելով ձուերի այդ մեծ քանակութեան, չեն թողնում որ նրանք մի րոպէ էլ գետնին մնան, իսկոյն վերցնում են ու տանում խուցերը, ուր դարսում են կանոնաւոր կոյտերով։ Ձու դնելուց պըր-

ծնելուց յետոյ էգն էլ որձերի պէս սատկում է։ Բանաւորների համար նոր հոգսեր են սկսվում. օրուայ մէջ նրանք մի քանի անգամ մի տեղից միւս տեղ են կրում ձուերը, նայելով թէ տաքութեան և խոնաւութեան ինչ քանակութիւն է հարկաւոր նրանցից մրջիւնաձագեր դուրս գալու համար։ Վերջապէս մի քանի օրից յետոյ ձուերից դուրս են գալիս փոքրիկ որդեր, որոնք իսկի նման չեն լինում մեծացած մրջիւններին. դրանք—մրջիւնների թրթուրներն են, որ յետոյ իսկական մրջիւն են դառնալու։ Այդ թրթուրները չափազանց շատակեր են և շատ մեծ խնամք կուզեն. այդ պատճառով նրանց աշխարհ գալուց յետոյ բանւոր մրջիւնների հոգսերը աւելանում ու բարդվում են։ Այդ բոլոր որդերը կամ թրթուրները սկզբում միմեանցից ոչնչով չեն տարբերվում, բայց վերջը բոլորն էլ միատեսակ մրջիւն չեն դառնում. մի քանիսը թեւաւոր էգ են դառնում, տասը քսանը՝ թեւաւոր որձ, իսկ մնացած հարիւրաւոր թրթուրները՝ բանւոր մրջիւններ։ Ի՞նչ է դրա պատճառը։ Ոմանք ենթադրում են, թէ այդ նրանից է, որ թագուհու բերած ձուերը միատեսակ չեն։ Այն ձուերը, որոնցից որձերն են դուրս գալու, նման չեն այն ձուերին, որոնցից էգեր պէտք է դուրս գան. իսկ այն ձուերը, որոնցից բանւորներ են դուրս գալու, բոլորովին տարբեր են թէ առաջին տեսակի և թէ երկրորդ տեսակի ձուերից։ Ուրիշներն էլ ուրիշ ենթադրութիւն են անում. նրանք կարծում են, թէ այն



թրթուրներն են որձ ու էգ դառնում, որոնց բանւոր մրջիւնները աւելի լաւ են խնամում ու կերակրում։ Այս վերջին ենթադրութիւնը հաւանական է որ ճիշտ լինի, որովհետև հաստատ ստուգված բան է, որ բանւոր մրջիւնները հարկաւոր ժամանակ, երբոր ուզենան, կարող են հասարակ բանւոր դառնալու նշանակված թրթուրից որձ կամ էգ դուրս բերել։ Իսկապէս ասած՝ գիտնականները այդ երևոյթի պատճառի մասին ոչինչ հաստատ բան չը գիտեն, և ես չեմ ուզում ձեզ մոլորեցնել զանազան կարծիքներ ու ենթադրութիւններ յայտնելով։

Պէտք է տեսնել թէ ինչ իրարանցում է բարձրանում մրջիւնանոցում, երբոր թրթուրները սկսում են ձուերից դուրս գալ։ Բանւորների սիրտը կարծես փառաւորվում է նայելով այդ պստիկ, թոյլ, բայց չափազանց շատակեր ճուտիկներին։ Ամենից առաջ բանւորները նրանց տեղաւորում են փոքրիկ խուցերում և ամեն առաւօտ, եթէ որ շատ ցուրտ ու խոնաւ եղանակ չի լինում, տեղափոխում են նրանց ներքի յարկերի սենեակներից վերին յարկերի սենեակները, ուր արևի լոյսն ու տաքութիւնը աւելի լաւ են թափանցում։ Յետոյ ամեն երեկոյ, որոշեալ ժամանակ, արևի մտնելուց մի ժամ առաջ, նրանց յետ են բերում ներքի յարկի սենեակները։ Իսկ ինչ էք կարծում, քիչ հոգս չի պատճառում բանւոր մրջիւններին—այժմ արդէն նրանց կարող ենք դայեակ անուանել—դայեակներին այդ թրթուրներին

կերակրելը։ Բանն այն է, որ նրանց համարեա այնպէս պէտք է կերակրել, ինչպէս փոքրիկ երեխաներին են ծիծ տալիս։ Ահա ինչպէս է անում դայեակ—մրջիւնը. առաջ ուտելիքը առնում է բերանը, ուր այդ ուտելիքը շրեշանման մի հեղուկ է դառնում, յետոյ գլուխը թրթուրի գլխին կպցնելով՝ այդ հեղուկը թափում է նրա բերանը։ Պէտք է տեսնել, թէ ինչպէս են թրթուրները գլուխները բարձրացնում ու աղերսալից հայեացքով նայում դայեակներին, երբ որ նրանք մօտներովը անց են կենում, որ մարդ հասկանայ թէ ինչպէս են սովածացել ու կերակուր խնդրում։ Թրթուրների մաքրութեան, խտակութեան մասին հոգալն էլ քիչ գլխացաւանք չի բանաւորների համար. նրանցից ամեն մէկին օրէնը մի քանի անգամ պէտք է բանւորները լեզուներովն ու ծնօտներովը մաքրեն ու սրբեն, որ նրանք չը հիւանդանան ու գոհ լինեն իրանց վիճակից։

—Հապա ինչպէս են այդ որդերը կամ թրթուրները իսկական մրջիւն դառնում, կը հարցնէք դուք։—Մի շտապէք և լսեցէք, կասեմ։

Ամեն մի թրթուր առաջ մեծանում է. յետոյ որոշ մեծութեան հասնելով սկսում է բերանից մի տեսակ կպչուն հեղուկ դուրս թողել, որ օդի մէջ մետաքսանման բարակ թելերի ձև է ստանում. թրթուրը սկսում է այդ բարակ թելերի հիւսուածքով հետզհետէ իրան չորս կողմից պատել, մինչև որ նրա շուրջը կազմվում է ձուաձև մի փոքրիկ պարկ, որի մէջ նա վերջը մնում է կալանաւորի



նման։ Այդ ձուաձև փոքրիկ պարկը բոժոժ է կոչվում և եթէ դուք երբ և իցէ տեսել էք շերամի շինած բոժոժներ, այն ժամանակ հեշտութեամբ կը հասկանաք թէ ինչ է մրջիւնի բոժոժը և թէ ինչպէս է նա շինում այդ բոժոժը։ Ահա այդ մրջիւնի թրթուր պարուանակող սպիտակ, ձուաձև բոժոժներին է, որ սովորաբար, բոլորովին սխալ կերպով „մրջիւնի ձու“ են անուանում հասարակ խօսակցութեան մէջ, մինչդեռ մրջիւնի ձուերը այդ բոժոժներից մօտ հարիւր անգամ փոքր են, այնպէս որ մարդու աչքը դժուար կարող է ջոկել նրանց առանց խոշորացոյցի։ Այդ ձուաձև պարկերի ճիշդ անունը հ ա ր ս ն ե ա կ է։ Բանւոր մրջիւնները այդ բոժոժներին էլ մեծ ջանքով խնամում են. նրանց էլ այնպէս պահպանում ու տեղափոխում են օրվայ զանազան ժամերին մի սենեակից ուրիշ սենեակ՝ ինչպէս որ թրթուրներին։ Ահա այդ սպիտակ պարկի մէջին է թրթուրը իսկական մրջիւն դառնում։ Երբ որ մրջիւնը բոլորովին կազմակերպվում պրծնում է, պէտք է դուրս գայ իր բանտից. բայց այդտեղ էլ առանց բանւոր մրջիւնի օգնութեան բանը գլուխ չի գալիս. մի քանի մրջիւն բարձրանում են բոժոժի վրա ու իրանց ծնօտներով կրծոտում բոժոժի այն մասը, որի տակը գտնվում է մրջիւնաձագի գլուխը. երբ որ ծակը այնքան մեծանում է, որ մրջիւնաձագը կարող է միջովը անցնել, բանւորները նրան քաշում դուրս են բերում նեքսևից, զգուշութեամբ հանում են վրայից

բարակ շապիկը, որով պատած են լինում նրա մարմնի բոլոր մասերը, լիզում սրբում են նրան և սկզբում, քանի որ մրջիւնաձագը դեռ պնդվել, ուժի չէ եկել, շատ մեծ հոգատարութեամբ խնամում են նրան։ Այդ բանւոր մրջիւնները, պէտք է համաձայնէք, որ նրանց համար մի տեսակ տատմայր ու մանկաբարձներ են։

Այդ բոլորից յետոյ բանւոր—դաստիարակների պարտականութիւնն է սովրեցնել ձագուկներին այն բոլորը, ինչ որ իրանք գիտեն ու անում են։ Է՜, այդ դժուար բան չի։ Այդ ձագուկները շուտով ամէն բան սովորում են. որովհետև մրջիւնի ձագ լինելով՝ մրջիւնների պէս չափից դուրս աչքաբաց ու խելօք են լինում։

## VI.

Միևնոյն մրջիւնանոցի մրջիւնները իրար հետ շատ սիրով, բարեկամաբար են ապրում։ Պէտք ասել, որ մրջիւնները,—թէև այդ ձեզ օտարօտի կը թուի,—զարմանալի սուր ընդունակութիւն ունեն միմեանց ճանաչելու և իրանց հետ ապրողներին օտարներից ջոկելու։ Իսկ օտարներին նրանք չեն սիրում. ուրիշ մրջիւնանոցի բնակիչներին նրանք իրանց ոխերիմ թշնամին են համարում, հալածում են նրանց չափազանց անգութ կերպով և երբեմն ձեռք չեն քաշում, մինչև որ չեն սատկացնում։ Վա՛յ է, եթէ մի աներկիւղ մրջիւն դիտմամբ կամ պատահմամբ՝ չեմ ասում օտար մրջիւնաբուն մտնի,



այլ ոտ դնի այնպիսի շաւղի վրա, որ իրան համայնքին չի պատկանում,—խեղճի հոգին կը հանեն, կը վռնդեն, կը կծոտեն, կը սատկեցնեն, ով է իմանում՝ և ողջ-ողջ ուտեն։ Բոլորովին ուրիշ կերպ են վերաբերվում նրանք իրանց ընկեր մրջիւնին, եթէ բան է նա պատահմամբ մոլորված, կորած է եղել մի քանի օր իւր մրջիւնանոցից հեռու ու վերադարձել է։ Նրա վերադարձն օտար մրջիւնի դալուստի նման շուտով նկատում են, բայց այնպէս չեն ընդունում, ինչպէս օտարին. ընդհակառակը նրան դիմաւորում են զգուանքով, լիզում, սրբում են նրա մարմինը, կերակրում են նրան. մի խօսքով ամէնքն էլ մի կերպով յայտնում են իրանց ուրախութիւնը, որ նա վերադարձել է։ Ես ձեզ մի քանի հետաքրքրական դէպքեր կըպատմեմ մրջիւնների կեանքից, որ դուք լաւ հասկանաք, թէ ինչ աստիճանի զարմանալի ընդունակութիւն ունին մրջիւնները իրանց ընկերներին օտարներից ջոկելու համար։

Փորձեր են արել, մրջիւնանոցից դիտմամբ մի քանի մրջիւն են վերցրել ու օրերով, մինչև անգամ շաբաթներով, փակել են մի ծածուկ տեղ՝ ենթադրելով, որ եթէ այդքան ժամանակ անցնելուց յետոյ ընկերները նրան տեսնեն, էլ չեն ճանաչի։ Բայց բանից դուրս է եկել, որ հէնց որ բանտարկվածներին թողել են մրջիւնաբունը, իսկոյն բոլորն էլ նրանց ճանաչել են, ուրախ-ուրախ ընդունել են ու սովորականից դուրս քնքշութեամբ փայփայելով՝ տարել

են ներքին սենեակները։ Բայց փորձեցէք նրանց բունը մի օտար մրջիւն դցել, տեսէք գլուխը ինչ կըբերեն, կամ կը սատկեցնեն կամ՝ ամէնաքիչը՝ ամէնախայտառակ կերպով կը վռնդեն։ Ահա մի ուրիշ նոյն տեսակ դէպք էլ. փորձի համար վերցրել են երկու խումբ մրջիւններ երկու զանազան մրջիւնանոցից ու առանձին առանձին դցել՝ բերանը լաչակի կտոր քաշած՝ ապակեայ երկու ամանի մէջ. յետոյ ամանները դրել են այդ երկու մրջիւնանոցներից մէկի մօտ։ Ճիշտ է, այդ մրջիւնաբունի մրջիւնները տեսնելով, որ իրանց ընկերները բանտարկված են, փորձ չէին անում, ոչ էլ մինչև անգամ ցանկութիւն ցոյց տալիս նրանց ազատելու, բայց պէտք էր տեսնել, թէ ինչպիսի կատաղութեամբ էին յարձակվում նրանք բանտարկված օտար մրջիւնների վրա. վազելով բարձրանալով ամանի վրա, մոլորվել էին ամանի բերանին քաշած լաչաքի գլխին, աշխատում էին գլուխները անց կացնել լաչաքի ծակերով ու կտոր-կտոր անել ատելի օտար մրջիւններին։ Այդ վերջին դէպքի հիման վրա դուք, ընթերցողներ, կարելի է այնպիսի կարծիք կազմէք, թէ մրջիւնների մէջ օտարներին ատելու զգացմունքը աւելի զօրեղ է քան իրանց ընկերներին սիրելու զգացմունքը, ապա թէ ոչ նրանք կաշխատէին ազատել գերութիւնից իրանց ընկերներին կամ գոնէ կերակրել նրանց ու մխիթարել գերութեան մէջ։ Ճիշտ է, կարելի կըլինէր այդպիսի ենթադրութիւն անել, եթէ որ բոլորովին հակառակը ապացուցանող օրինակներ



չը լինէին։ Դիտողները այնպիսի դէպքեր են պատմում, որոնք ցոյց են տալիս, թէ մրջիւնը՝ ընդհակառակը սաստիկ սիրում է իւր ընկերներին ու շատ սրտացաւութեամբ է վերաբերվում դէպի նրանց, երբ որ նրանց մի անբախտութիւն է պատահում։ Օրինակ՝ հաստատ յայտնի է, նը նրանք վերցնում են գետնից վիրաւորվածներին ու տկարներին և տանում մրջիւնանոց, ուր նրանց ամենամեծ հոգատարութեամբ պահում ու խնամում են։ Իսկ երբ որ մրջիւնը տեսնում է, որ ընկերը շատ վատ է, լաւանալու յոյս չի տալիս ու պէտք է սատկի վերքերից կամ տկարութիւնից, ընդհակառակը նրան դուրս է տանում մրջիւնանոցից ու թողնում անխնամ։ Դուք լաւ գիտէք, թէ որքան գործ և հոգս ունին բանւոր մրջիւնները, որքան պարտականութիւններ ունին կատարելու, այնպէս որ դուք ներողամիտ կըլինէք, որ նրանք այդպէս անգութ կերպով են վերաբերվում իրանց անյուսալի տկար ընկերներին։

Դուք տեսաք արդէն, որ մրջիւնները շատ թշնամաբար են վերաբերվում օտար մրջիւններին։ Ուրեմն դուք չէք զարմանայ, եթէ ասեմ ձեզ, որ զանազան մրջիւնաբների մրջիւնները իրար դէմ պատերազմ են մղում, ճակատամարտներ են ունենում, գերի են առնում, լրտեսներ են ուղարկում, մի խօսքով անում են այն ամէնը,—ինչ որ մարդկանց կանոնաւոր զօրքերն են անում։ Զափազանց հետաքրքրական տեսարաններ են ներկայացնում մրջիւնների պատերազմներն ու կռիւները։ Մրջիւնների

պատերազմների նպատակը նոյնն է, ինչ որ մարդկանց պատերազմներինը՝—աւերում, կողոպտում են թշնամիների տուն ու տեղը, ունեցած չունեցածը, հակառակորդներին գերի են տանում, որ յետոյ նրանց բանեցնել տան իրանց համար։ Երևակայեցէք մրջիւնների պատերազմի հեռաւեալ տեսարանը։ Շէկ մրջիւնները վճռել են արշաւանք գործել սև մրջիւնների վրա։ Սևերը չեն կարծում, որ իրանց վրա յարձակվող կը լինի և զբաղված են իրանց խաղաղ գործերով՝ նորոգում են իրանց բնակարանը, կերակուր են տալիս ձագերին, պաշար են կրում տուն։ Յանկարծ բանւոր սև մրջիւններից մի քանիսը նկատում են, որ հեռւում՝ իրանց մրջիւնանոցի շաւղով ինչ որ մի շիկագոյն ժապաւէնի նման բան է շարժվում. իրար են անցնում սև բանւորները, գլխապատառ վազում են իրանց բունը, յայտնում են բոլորին ու աղմուկ բարձրացնում։ Թընդաց մեծագլուխ սև զինուորների սիրտը, շփոթվեցին հասարակ բանւորները, անխուսափելի մահուան մօտենալը զգացին գոնչագլուխ կոյրերը։ Բայց ինչ արած, պէտք է մինչև արեան վերջին կաթիլը պաշտպանել հայրենի բունը, սիրելի ձագուկներին, ընտանի կենդանիներին ու բոլոր ունեցած չունեցածը։ Բոլորը դուրս են թափվում մրջիւնանոցից, քաջ պահապաններ են գնում դրան մուտքի մօտ ու ըստասում են թշնամուն։ Իսկ ահարկու ալիքը հետզհետէ աւելի ու աւելի մօտենում է։ Լաւ նայեցէք այդ շարժուն շիկագոյն ժապաւէնին,—ի՞նչ կարգ



ու կանոնով է կազմված։ Առաջից վազելով գալիս են մի քանի մեծագլուխ տեղեկաբերներ ու լրտեսներ. առաջապահ գունդը և զօրքի աջ ու ձախ թևերը բաղկացած են զինուոր—մրջիւնների կանոնաւոր շարքերից. նրանց յետևից՝ ոչ այնքան կարգաւորված՝ գալիս են հասարակ բանւորները.—այդ խաղաղ քաղաքացիներից հաւաքված կամաւորների զօրագունդն է։ Զինուորների շարքերի կողքից վազ են տալիս մի քանի մեծագլուխ մրջիւններ,—դրանք նրանց զօրապետները, հրամանատարներն են, որոնք արշաւանքի ժամանակ առաջնորդում են մրջիւններին և նրանց տարօրինակ, ինձ ու ձեզ համար անհասկանալի, պատուէրներ են տալիս։ Վերջապէս զօրքը տեղ է հասնում և սկսվում է զարհուրելի, արիւնահեղ ճակատամարտ։ Սկսում են կռւել ամուր ծնօտներով. կռւում են անկանոն խմբերով, կռւում են և ջոկ-ջոկ։ Ահա երկու կտրիճ իրար են կպել ծնօտներով և նրանցից մէկը աշխատում է փորովը խփել միւսի վերքին։ Ի՞նչ է անում այդ, ինչու է աշխատում փորովը խփել վերքին։ Ահա բանը ինչումն է։ Նրա փորից դուրս է թափվում մի տեսակ կծու հիւթ, թոյն, որ մրջիւնային թթուտ է կոչվում. եթէ այդ հիւթը ընկնի վերքի բացուածքի վրա, մրջիւնի բանը պրծել է, վախճանն եկել է։ Մի այստեղ նայեցէք, թէ ինչ ծիծաղելի տեսարան է. մի քանի փոքրիկ շէկ բանւոր—մրջիւններ շրջապատել են մի սև զինուորի և կատաղութեամբ քաշքշում են նրան. վերջապէս շէկ կտրիճներից

մէկը օգտուելով յարմար րոպէից բարձրանում է նրա մէջքի վրա և ծնօտների արագ շարժումով կըծում, պոկում է նրա մեծ գլուխը: Մեռած մեծագլուխ հերոսը: Մրջիւնանոցի դրան մօտ էլ ահագին տուր ու դմբոց է բարձրացել. շէկերը աշխատում են մի կերպ մրջիւնանոցը մտնել. վերջապէս նրանց յաջողում է յաղթել պահապաններին. խեղճերը հերոսաբար մեռան պաշտպանելով իրանց պահպանութեան յանձնված մուտքը: Շէկերը խառն ի խուռն, բազմութեամբ ներս են թափվում սևերի բունը, ճանկում են ձագուկներին, բոժոժները, պաշարեղէնը և վազելով վերադառնում իրանց մրջիւնանոցը: Իսկ դրսում կռիւը դեռ շարունակվում է, թէև աւելի հանդարտ, որովհետև յարձակվողները արդէն հասել են իրանց նպատակին: Շէկերը յաղթեցին, ահա նրանք վազելով վերադառնում են իրանց բունը՝ բերաններին բռնած սև ամորթ-ձագուկներ, գերիներ, բոժոժներ, հատիկներ և մինչև անգամ սև մրջիւնների դիակներ, որոնց նրանք պէտք է տանը անուշ անեն:

Տխուր տեսարան. աւերմունք և մահ. բունը քանդված, բոժոժները ցիր ու ցան, պատերազմի դաշտը ծածկված դիակներով, կտրված գլուխներով, ոտներով ու ծնօտներով . . . Դիակների մէջ պըտոյտ են գալիս մի քանի շէկ ու սև մրջիւններ. նրանք գետնից ժողովում են վիրաւորվածներին ու անդամաբեկվածներին և տանում են իրանց մրջիւնանոցները՝ ձեռքներից եկած օգնութիւնը հասցնելու համար:

Ա.հա այդպիսի տեսարան է հանդիսացնում մրջիւնների պատերազմը:

Բայց շէկերին ինչի՞ են պէտք սև մրջիւնները. ինչու՞ են շէկերը յաղթութիւնից յետոյ սևերին ու նրանց բոժոժները տանում իրանց բունը:—Դուք իհարկէ յիշում էք, որ վերև մի տեղ ասեցի, թէ ստրուկ մրջիւններ կան: Ա.հա այդ սև գերիները պէտք է ստրուկների պաշտօն կատարեն իրանց տէրերի—շէկերի մրջիւնանոցում. նոյն բախտին կարժանանան և այն սև մրջիւնաձագերը, որոնք դուրս են գալիս նրանց մրջիւնանոցից՝ շէկերի աւար առած բոժոժներից: Զանազան մրջիւնանոցներում ստրուկների պաշտօնն ու դրութիւնը տարբեր են: Այնպէս տեղ կայ, որ ստրուկները աշխատում են մրջիւնանոցի ուրիշ բանուորների հետ ու նրանց հաւասար դայեակների, մատակարարների, որմնադիրների, որս ճարողների և այլն պաշտօն են կատարում. այնպէս տեղ էլ կայ, որ ստրկատէրերը նրանց մրջիւնանոցի շէմքից դուրս չեն թողնում, այնպէս որ նրանք պէտք է միայն տան գործերով պարապեն մրջիւնանոցի մէջ, այսինքն պէտք է իրանց տէրերի ձագուկներին պահեն ու կերակրեն: Վերջին դէպքում՝ մի մրջիւնանոցից ուրիշ մրջիւնանոց տեղափոխելիս ստրկատէրերը չեն թողնում որ ստրուկները ոտով գնան, այլ իրանք են նրանց վերցնում տանում, երևի վախենալով, որ չըլինի թէ նրանք յարմար

ժամանակից օգուտ քաղելով՝ փախչեն իրանց հայրենի մրջիւնանոցը։ Վերևը յիշած երկու դեպքումն էլ ստրուկների դրութիւնը շատ էլ անտանելի չէ և համարեա ոչնչով չէ զանազանվում իրանց բանւոր տերերի դրութիւնից։ Նոյնը չէ կարելի ասել այն մրջիւնանոցների ստրուկների մասին, որոնց տերերը այն աստիճան փչացած են, որ ոչինչ չեն անում։ Այդտեղի բանւոր մրջիւններին որ տեսնէք, աչքներիդ չէք հաւատայ, այնքան ծուլացել են, որ իսկի բանւորի նման չեն։ Միակ գործը, որ նրանց կարծիքով՝ իրանց պատուից ստոր չէ,—այդ պատերազմն է, որ նրանց միջոց է տալիս աւելացնելու իրանց սարուկների թիւը նոր գերիներով։ Ուրիշ բաներում այդ աղաները բոլովին անպէտք, ողորմելի արարածներ են։

Ծիծաղելի դէպք են պատմում նրանց մասին։ Բանն այն է, որ նրանք ոչ միայն իրանց համար բուն շինել չը գիտեն, կերակուրը իրանք չեն ճարում ու ձագուկներին խնամելու շնորհք չունեն, այլև մինչև անգամ պատրաստ կերակուրը առանց ստրուկների օգնութեան չեն կարողանում ուտել. այդ ամէնը, մինչև անգամ՝ ինչպէս տեսնում էք, տերերին կերակուր ուտեցնելը ստրուկների վզին է դրած։ Այժմ դուք հեշտութեամբ կարող էք երևակայել, թէ ինչ անօգնական և ծիծաղելի դրութիւն կը լինի տերերի դրութիւնը, եթէ մէկը վերցնի ու բոլոր ստրուկներին նրանցից հեռացնի։ Մի կատակասէր գիտող մի անգամ այդպիսի փորձ է արել և



ինչ. աղա—մրջիւններից շատերը սոված սատկել են. աւելի պինդ կազմուածք ունեցողները սաստիկ թուլացել ու նիհարացել են քաղցածութիւնից, և անչափ ուրախացել են, երբ որ նորից նրանց մօտ մի քանի ստրուկ մրջիւն են թողել, որոնք իսկոյն սկսել են նրաց լիզել, մաքրել ու կերակրել։ Այդ ծոյլ աղաները զրկվել են մինչև անգամ շարժվելու ընդունակութիւնից, այնպէս որ ստրուկները պէտք է նրանց վերցնեն տանեն, եթէ մի որևէ պատճառով՝ օրինակ թշնամիների աւերումից յետոյ՝ պէտք լինի փոխվել մի նոր մրջիւնաբուն։

Եթէ որ մինչև այժմ ձեր լսածը, կարդացածը շատ էլ զարմանալի չէ ձեր կարծիքով, և չէ ցոյց տալիս, թէ մրջիւնները շատ խելօք արարածներ են, ես, պատմութիւնս վերջացնելու համար՝ մի վերջին աստիճանի հետաքրքրական դեպք կը հաղորդեմ ձեզ նրանց կեանքից։ Ահա թէ ինչ է պատմում Ֆոխտ անունով գիտնականը, իր մի բարեկամի փորձի մասին։

«Մրջիւնները ուտում, փչացնում էին նրա պարտէզի կեռասը-բալին. նրանց ոտը այդ ծառից կտրելու համար՝ նա ծառի բունին օղաձև, մի մատի լայնութեամբ՝ չիբուխի միջից քերած՝ թամբաքուի մրուր քսեց։ Ահագին խմբով ծառը բարձրացող մրջիւնները հէնց որ այդ սոսնձանման ու դարշահոտ օղակին հասան, գլուխները շուռ տուին ու յետ դնացին։ Այն մրջիւնները, որոնք ծառի վրա էին և ուզում էին ցած իջնել, չհամարձակվեցին անց կենալ օղակի վրայով. նրանք նորից վեր բարձրացան

ու ճիւղերի վրայից իրանց վայր գցեցին։ Այդպիսով կարճ ժամանակում նրանք համարեա բոլորը քաշվեցին ծառից։ Բայց մի ժամանակից յետոյ մրջիւնները էլի սկսեցին ծառի բունովը վեր բարձրանալ։ Նրանցից ամէն մէկը բերանին բռնած տանում էր մի կտոր հող. հասնելով օդակին նրանք սկսեցին ամենայն զգուշութեամբ հողի կտորները մէկ-մէկի մօտ թամբաքուի մրուրի վրա դնել, այնպէս որ քիչ-քիչ կազմվեց կարգին խճուղի, որը նրանք մեծ խնամքով ու ջանքով տրորելով, պնդացրին ու լայնացին։ Յետոյ, երբ որ կէս մատի լայնութեամբ շերտ կազմվեց, մրջիւնները բոլորովին անվտանգ կերպով սկսեցին երկայն շարքով բարձրանալ ծառի վրա և շուտով ծառը ծածկվեց աւերիչ մրջիւնների այնպիսի բազմութեամբ, որ սեւացաւ . . . »

Մարդ որ նայում է մրջիւնին, չէ ուզում հաւատալ, թէ այդ հասարակ միջատի մէջ այդքան խելք ու շնորհք կայ։ Սակայն, էլի կրկնում եմ, այն բոլորը, որ ես նոր ձեզ պատմեցի, հէքեաթ ու հնարովի բաներ չեն, այլ բազմաթիւ գիտնականների ճիշտ դիտողութիւններ, գիտնականների, որոնք տարիներով ուշադրութեամբ ուսումնասիրել են մրջիւնների կեանքը

Վ Ը Ր Ջ

ՀՍՍՌ-ԱԳԻՏ.ԳԻՐ
Ա. Մ. Գորկու անվան Դոնեցկի պետական գրադարան

Անց. գր. բաժ. 15 մ. 9550

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0082820